

ՀՀ Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանի շնորհավորական ուղերձը Ուսուցչի տոնի կապակցությամբ

04.10.2013



Մի րեւի ուսուցիչներ

Շնորհավորում եմ ձեզ՝ Ուսուցչի օրվա առթիվ:

Ուսուցիչը մեր ժողովրդի համար միշտ եղել է սիրելի անձնավորություն: Դժվար է պատկերացնել ավելի կարևոր ու պատասխանատու առաքելություն, քան սերունդներ կրթելն ու դրա միջոցով հայ ժողովրդի վաղվա օրը կերտելը, կյանք մտնելու նախաշեմին առաջին քայլերն ուղղորդելը:

Շնորհակալություն ձեր անձնվիրաց աշխատանքի և նվիրումի համար, որովհետև դուք ձեր ջերմությունը, արժեհամակարգն ու մասնագիտական հմտությունները փոխանցում եք աճող սերնդին և արժանապատվորեն շարունակում եք հայ մանկավարժի դարերից եկող և դարեր գնացող առաքելությունը: Մեծ է ձեր վաստակն ինչպես մեր սերունդների կրթության ու դաստիարակության, այնպես էլ մեր հայրենիքի կայացման ու զարգացման գործում:

Հարգարժան մանկավարժներ, կրկին շնորհավորելով այս գեղեցիկ օրվա առթիվ, մաղթում եմ ձեզ անսպառ եռանդ, ստեղծագործական բեղմնավոր աշխատանք և նորանոր հաջողություններ ձեր անչափ պատասխանատու և շնորհակալ աշխատանքում:

*Խորին հարգանքով
Էդիկ Բարսեղյան
ՀՀ Արարատի մարզպետ*